ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ՆԱԽԱԳԱՀ

Հայաստանի Հանրապետություն, 0010, ք. Երևան, Տիգրան Մեծի 4, հեռ.՝ (+374 60) 830 840,(+374 60) 830 850
Էլ-փոստ՝ info@competition.am, վեբ կայք՝ http://www.competition.am

«2» 07 2024թ.
No 7508

«ՀԱՅՐ ԵՎ ՈՐԴԻ ՀԱՐՈՅԱՆՆԵՐ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ՊԱՐՈՆ ՏԻԳՐԱՆ ՀԱՐՈՅԱՆԻՆ
(հասցե՝ ք. Երևան, Արաբկիր, Կոմիտասի պող., 36/7, 4/1 բն., էլ. փոստի հասցե՝ tigranharoyan@mail.ru)

Հարգելի՛ պարոն Հարոյան,

Մրցակցության պաշտպանության հանձնաժողովը (այսուհետ՝ **Հանձնաժողով**) 2024 թվականի հունիսի 24-ի ««Հայր և Որդի Հարոյաններ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից տնտեսական մրցակցության բնագավառում իրավախախտման վերաբերյալ վարույթ հարուցելու մասին» թիվ 312-Ա որոշմամբ հարուցված ՀԳ-02680/24 վարույթի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկման անհրաժեշտությունից ելնելով և ղեկավարվելով «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» օրենքի (այսուհետ նաև՝ **Օրենք**) 43-րդ հոդվածի 2-րդ մասով՝ խնդրում ենք սույն գրությունը ստանալու օրվանից 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում Հանձնաժողով ներկայացնել հետևյալ տեղեկատվությունը.

1. 2023 թվականի հունվարի 1-ից մինչև 2024 թվականի մայիսի 24-ն ընկած ժամանակահատվածում (այսուհետ նաև՝ **Դիտարկվող ժամանակահատված**) «Հայր և Որդի Հարոյաններ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ նաև՝ **Ընկերություն**) կողմից օկտանի ձեռքբերման նպատակի վերաբերյալ.

2. Դիտարկվող ժամանակահատվածում Ընկերության կողմից ձեռքբերված օկտանի շրջանառության վերաբերյալ՝ համաձայն կից ներկայացվող Ձևանմուշի.

3. Ընկերության կողմից շահագործվող սեփականության իրավունքով կամ վարձակալությամբ գործող բենզալցակայանների հասցեները՝ կցելով դրանք հիմնավորող փաստաթղթերի (սեփականության վկայականի, վարձակալության իրավունքի վկայականի և այլն) պատճենները:

Տեղեկացնում ենք նաև, որ.

1. «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ տարիներով, ամիսներով կամ օրերով հաշվարկվող ժամկետների ընթացքն սկսվում է այն օրացուցային տարվա, ամսվա, ամսաթվի կամ վրա հասած իրադարձությանը հաջորդ օրվանից, որով որոշված է դրա ժամկետի սկիզբը:

2. «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 27-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ վարչական վարույթի իրականացման հետ կապված փաստաթղթերը կազմվում են, և ամբողջ գործավարությունն իրականացվում է հայերենով:

3. Օրենքի 43-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ տնտեսավարող սուբյեկտի հիմնավոր միջնորդության հիման վրա Հանձնաժողովի նախագահի գրությամբ կամ Հանձնաժողովի որոշմամբ սահմանված տեղեկատվության ներկայացման ժամկետը համապատասխանաբար կարող է Հանձնաժողովի նախագահի գրությամբ կամ Հանձնաժողովի որոշմամբ երկարաձգվել, և տեղեկատվությունը ենթակա է տրամադրման այդ ժամկետում:

4. Օրենքի 43-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ Հանձնաժողովի կողմից փաստաթղթեր, նյութեր և այլ տեղեկատվություն պահանջելու իրավաչափությունը տնտեսավարող սուբյեկտը կարող է վիճարկել միայն այն չտրամադրվելու դեպքում՝ Հանձնաժողովի կողմից պատասխանատվության միջոց կիրառելու մասին որոշման վիճարկման շրջանակում:

5. «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի համաձայն՝ անձի և վարչական մարմնի փոխհարաբերություններում ապացուցման պարտականությունը կրում է անձը՝ նրա համար բարենպաստ փաստական հանգամանքների առկայության դեպքում: Ընդ որում, նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ եթե սույն հոդվածի 1-ին մասի «բ» կետով նախատեսված դեպքում վարչական մարմնի կողմից քննարկվող փաստական հանգամանքների վերաբերյալ տվյալներին (տեղեկություններին) վարչական մարմինը կարող է իրազեկ դառնալ բացառապես տվյալ անձի միջոցով, ապա ապացուցման պարտականությունը դրվում է այդ անձի վրա:

6. ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 28-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կողմը պարտավոր է դատարանին ներկայացնել իր տիրապետման տակ կամ ազդեցության ոլորտում եղած այն բոլոր ապացույցները, որոնցով նա հիմնավորում է իր պահանջները կամ առարկությունները: Կողմն իրավունք չունի ներկայացնելու այնպիսի ապացույցներ, որոնք չեն ներկայացվել վարչական վարույթի ընթացքում, բացառությամբ այն դեպքերի, երբ կողմը չի ներկայացնում բավարար հիմնավորումներ այն մասին, որ օբյեկտիվորեն զրկված է եղել նշված ապացույցները վարչական վարույթի ընթացքում ներկայացնելու հնարավորությունից: Միաժամանակ, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 124-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ վիճարկվող վարչական ակտի իրավաչափությունը որոշելիս վիճարկող կողմի՝ իր համար բարենպաստ հետևանքներ առաջացնող ապացույցների՝ վարչական վարույթի ընթացքում չտրամադրման հետևանքով առաջացած ոչ բարենպաստ հետևանքների ապացուցման բեռը չի կարող դրվել վարչական մարմնի վրա:

7. Օրենքի 93-րդ հոդվածի 9-րդ մասի համաձայն՝ վարույթով պատասխանող տնտեսավարող սուբյեկտի կողմից Հանձնաժողովի նախագահի գրությամբ կամ Հանձնաժողովի որոշմամբ կամ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր կամ այլ տեղեկատվություն սահմանված ժամկետում չներկայացվելու կամ ոչ հավաստի կամ ոչ

ամբողջական տեղեկություններ ներկայացվելու համար նշանակվող տուգանքի չափը կազմում է մինչև վարույթով քննարկվող իրավախախտման համար սահմանված տուգանքի չափը, իսկ մի քանի խախտումների դեպքում՝ դրանց համար սահմանված առավել խիստ տուգանքի չափը:

8. ՀՀ քրեական օրենսգրքի 479-րդ հոդվածով վարչական վարույթով ապացույց կամ բացատրություն կեղծելու, փոխելու, ոչնչացնելու կամ թաքցնելու կամ կեղծ ապացույց ներկայացնելու համար սահմանված է քրեական պատասխանատվություն:

9. ՀՀ քրեական օրենսգրքի 504-րդ հոդվածով վարչական վարույթով սուտ բացատրություն կամ սուտ ցուցմունք տալու համար սահմանված է քրեական պատասխանատվություն:

Առդիր՝ «1» թերթ:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝
ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՓՈԽԱՐԻՆՈՂ **ՏԻԳՐԱՆ ՄԱՐԿՈՍՅԱՆ**

Կատարող՝ Արեգ Հովհաննիսյան
Անբարեխիղճ մրցակցության վերահսկողության վարչություն
Հեռ. (+374 60) 830-840 (238)

competition.am կայքում հրապարակման օրը՝ 16 օգոստոսի 2024 թվական:

Ձևանմուշ

Տեղեկանք

2023 թվականի հունվարի 1-ից մինչև 2024 թվականի մայիսի 24-ն ընկած ժամանակահատվածում օկտանի շրջանառության վերաբերյալ*

Կազմակերպության անվանումը՝ ____________________

Հեռախոսահամար ____________________

Պաշտոնական էլ. փոստի հասցե ____________________

ՀՀ	Ժամանակահատված		Մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի սկզբին		Ներմուծման ծավալ					ՀՀ տարածքում այլ տնտեսավարող սուբյեկտներից հաշվետու ժամանակահատվածում ձեռք բերված ծավալ		Օգտագործման նպատակը և չափը			Հայաստանի Հանրապետությունում իրացման ծավալը																Արտահանում		Մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ	
			Բնեղեն (լ)	Արժեքային (ինքնարժեք, դրամ)	Բնեղեն (լ)	Արժեքային				Բնեղեն (լ)	Ձեռքբերման արժեք (դրամ)	Նպատակ	Բնեղեն (լ)	Արժեքային (ինքնարժեք, դրամ)	Ընդամենը								Այդ թվում հաշվետու ժամանակահատվածի ընթացքում ՀՀ տարածքում այլ տնտեսավարող սուբյեկտներից ձեռքբերված և …		Այդ թվում՝ պետական գնումների շրջանակներում իրացում			Այդ թվում՝ կտրոնների միջոցով իրացում			Բնեղեն (լ)	Արժեքային (դրամ)	Բնեղեն (լ)	Արժեքային (ինքնարժեք, դրամ)
						Ինվոյսային արժեք (տարադրամով)	Տարադրամը (USD, RUB և այլն)	Մաքսային արժեք (դրամ)	Ինքնարժեք (դրամ)						Բնեղեն (լ)		Արժեքային (ինքնարժեքով, դրամ)		Արժեքային, վաճառքի գներով, առանց հարկերի (դրամ)		Արժեքային, վաճառքի գներով (ներառյալ հարկերը և պարտադիր վճարները, դրամ)		Բնեղեն (լ)	Արժեքային, վաճառքի գներով (դրամ)	Բնեղեն (լ)	Արժեքային, վաճառքի գներով, առանց հարկերի (դրամ)	Արժեքային, վաճառքի գներով (ներառյալ հարկերը և պարտադիր վճարները, դրամ)	Բնեղեն (լ)	Արժեքային, վաճառքի գներով, առանց հարկերի (դրամ)	Արժեքային, վաճառքի գներով (ներառյալ հարկերը և պարտադիր վճարները, դրամ)				
	Տարի	Ամիս													մեծածախ	մանրածախ	մեծածախ	մանրածախ	մեծածախ	մանրածախ	մեծածախ	մանրածախ												
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18	19	20	21	22	23	24	25	26	27	28	29	30	31	32	33	34	35
1	2023	հունվար																																
2		փետրվար																																
3		մարտ																																
4		ապրիլ																																
5		մայիս																																
6		հունիս																																
7		հուլիս																																
8		օգոստոս																																
9		սեպտեմբեր																																
10		հոկտեմբեր																																
11		նոյեմբեր																																
12		դեկտեմբեր																																
13	2024	հունվար																																
14		փետրվար																																
15		մարտ																																
16		ապրիլ																																
17		մայիսի 24																																

1. Ձևանմուշը կարող եք ուղարկել նաև info@competition.am, a.hovhannisyan@competition.am և meruzhan.khachatryan@competition.am էլ. փոստի հասցեներին:

2. Ձևանմուշն անհրաժեշտ է ներկայացնել էլեկտրոնային (Excel) եղանակով և հնարավորության դեպքում՝ թղթային, որի յուրաքանչյուր էջը ստորագրված՝ կնիքի առկայության դեպքում կնքված:

3. Ձևանմուշի էլեկտրոնային տարբերակը ստանալու համար անհրաժեշտ է էլեկտրոնային նամակ ուղարկել info@competition.am, a.hovhannisyan@competition.am կամ meruzhan.khachatryan@competition.am հասցեներով: